№ 101 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 1891 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 № 101

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամն
(բացի կիրակի և աօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՆԳՇԱԲԹԻ, սեպտեմբերի 12-ին ներկայ 1891 թ., Թիֆլիսի ԱԶՆԻԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ **ԹԱՏՐՕՆՈՒՄ** նշանակված է ջուլթակահար վիրտուօզ, նեղը

ԲՐԻՆԴԻՍԻ

երկրորդ կօնցէրտ։

Տոմսակները ծախվում են Լանկօի երաժշտական մագազինում։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նկարչի կեանքից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 25-ին

Ամսիս 23-ին մենք պիտի ներկայ լինէինք մի ուրախալի և հետաքրքիր երևոյթի. Թուրք երիտասարդները պիտի ներկայացնէին իրանց կեանքից վերցրած պիէսաներ։ Դա, եթէ չենք սխալվում, երկրորդ անգամն է, որ թիւրքերը Շուշում տալիս են ներկայացում (չը հաշուելով հայ դերասան Սաֆրազի տուածները)։ Ժամը 8-ին քայլերս ուղղեցի դէպի ներկայացման տեղը։ Փողոցում կանգնած էր թուրքերի մեծ խումբ, որոնք եկել էին գէթ դրսից ներկայ գտնվել այդ նոր երևոյթին։ Մտայ դահլիճը։ Մի խառնիճաղանճ հասարակութիւն եկել էր ներկայացման. կային բազմաթիւ թուով հայեր, ռուս պաշտօնեաների մեծ մասը և թիւրքեր զանազան դիրքի և հասակի։ Ինչ որ հետաքրքիրն էր չը կար և ոչ մէկ թուրք կին (թէև լօժաները՝ զետեղած վերին յարկում, գրեթէ անտեսանելի են դահլիճի հասարակութեան)։ Իմ հարցիս՝ ինչու բացակայ են կանայք, մօտս նստած թուրքը բաւականացաւ համառօտ «օլմադ»-ով (անկարելի է), իսկ երբ մի փոքր նստելուց տեսայ ինչպէս են անխոհեմ տղամարդիկները աչքերը դիտում լօժաներում նստած մի ջուխտ հայ տիկիններին, այն ժամանակ միայն հասկացայ ադղու «օլմադի» նշանակութիւնը։ Ես մի փոքր ուշացել էի. վարագոյրը արդէն բարձրացած էր. տօմսակս ներկայացրի կառավարչին և խնդրեցի տեղս։ Դուրս եկաւ որ ուրիշն է բռնել. ներողութիւն խնդրելով կառավարչից ես քաշվեցի մի անկիւն և ըսկսեցի դիտել։ Պիտի նկատեմ որ թուրքերից շատերը, որոնք գուցէ առաջին անգամն են դուրս գալիս հասարակաց տեղեր, ամենանահապետական գաղափար ունեն տեղերի մասին, ունեն ատմսակ, կարծում են թէ կարելի է ամեն տեղ նստել. որ մէկին հասկացնէ իսեղճ կառավարիչը։ Ես նկատեցի և ինձ հաղորդեցին մի քանի այդպիսի դէպքեր...։

Խաղում էին Միրզա-Ֆէտ Ալի-Ախունդովի «Mousieur Ժօրդան, կամ երևելի կախարդ» կօմեդիան և «Աներևոյթ շալ» վոդեվիլը։ Այս հեղինակը Վօրոնցովի յորդորմամբ գրել է թուրքերի կեանքից 5 պիէսաներ, որոնք պիտի քարոզէին այն մտքերը ինչ որ ցանկալի էր կառավարչական շրջաններում. դուրս բերել թուրքին իր նախնի, կիսավայրենի դրութիւնից և հասկացնել կառավարութեան բարի նպատակները։ Գուցէ հետաքրքիր լինի ընթերցողին պիէսաների բովանդակութիւնը։ Ֆրանսիայի բուսաբան M-r Ժօրդան ուսումնական նպատակով ճանապարհորդելով Կովկասում, հիւրընկալվում է մի թուրք բէկի ընտանիքում և վերադարձին աշխատում է բէկի 22 տարեկան որդուն (որը արդէն նշանած ունի) տանել Պարիզ կրթելու։ Երկար տատանվելուց յետոյ բէկը համաձայնվում է, բայց նրա կինը և որդու նշանածը զարհուրում են, որ իրանց սիրելին պիտի գնայ անբարոյական «գիաւուրների» մօտ կրթվելու, և ամեն միջոց գործադրում են քանդել Ժօրդանի աշխատանքը։ Սրանց օգնութեան է հասնում թուրք պառաւը, որը խոստանում է բերել հմայող դերվիշ, որի ձեռքից ամեն բան գալիս է։ Դերվիշը լաւ գումար վերցնելուց յետոյ յայտնում է, որ իր դևերը այս րօպէիս քարուքանդ կանեն Ֆրանսիայի մայրաքաղաքը. նա փայտի կտորներից շինում է իբր թէ Պարիզը և գաւազանի մի զարկով կործանում շինածը. ապա յայտնում է, որ մինչև 10 օրը լուր կը գայ թէ Պարիզը կործանվել է։ Հէնց այդ րօպէին (անցքը պատահում է 48 թւի սկզբում փետրվարի յեղափոխութեան ժամանակ) մտնում է M-r Ժօրդան և յայտնում, որ տեղեկութիւն է ստացել գաւառապետից Պարիզի աւերման մասին և շտապով պիտի ուղևորվի Ֆրանսիա. ի հարկէ, այդ րօպէին նրա զարդը չէր թուրքի բէկի որդին. նա մնում է տանը։

«Աներևոյթ շալի» բովանդակութիւնը յայտնի եւրոպական անեկդօտն է. վոդեվիլը յարմարեցրած է թուրքերի կեանքին, որը արել է շուշեցի մի թուրք գրականագէտ։

Գալով խաղին, պիտի ասեմ, որ թուրքերին մեծ դուարճութիւն էր պատճառում տեսնել բեմի վրա իրանց կեանքի երևոյթները, թէև խաղացողները մասամբ իրանց մեղքով (որը վերագրել կարելի է անփորձութեան), մասամբ թոյլ և անկենդան պիէսաների շնորհով, լաւ չէին խաղում։

Կեանք ասած բանը չը կար բեմի վրա և որտեղից լինի նա, քանի որ գործողութեան մեծ մասը դերակատարները ծալապատիկ նստած են կատարում։ Կանանց դերերը կատարում էին ի հարկէ, տղամարդիկ. շատ և շատ վայելուչ էր իր դերում թուրք բէկի կինը («M-r Ժօրդանում») ուսուցիչ Վիզիրով, որի շարժուածքը կատարեալ կանացի էր և միայն ձայնը տեղ տեղ մատնում էր նրա գեղեցիկ սեռին չը պատկանելը։ Մնացածները կարծես աւելի դիւր գալու համար հասարակութեան, տեղ-տեղ անբնականացնում և չափազանցնում էին դերերը։ Մի բան որ ամենում գովելի էր, դա դերերը լաւ սերտելն էր (հայ դերասանների և, ուր մնաց, սիրողների թոյլ կողմը), չէ կարելի դա արդեօք բացատրել նրանով, որ նրանց խօսակցական լեզուն և գրականը մի և նոյնն է (մեր խօսքը ադրբէջանի լեզուի մասին է)։ Ժամը 11-ին, գոհ երեկոյթից, հասարակութիւնը սկսեց ցրվել. ասում են թուրքերը խնդրել են կաղմողներին գլուխ բերել մի քանի ներկայացումներ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻՑ

(Յիշողութիւններ)

VI

Մենք գնում էինք Անի։ Այժմ մեր խումբը բաւական մեծացել էր, այնպէս որ ֆուրգօնում չը տեղաւորվելու պատճառով մեզանից մի քանիսը ձի են նստել։ Ես նստած եմ ֆուրգօնի ետևի մասում, ուր շատ անյարմար է, երկու կողմից էլ սեղմված եմ։ Աջ կողմս նստած է ու ինձ վրա յենված հաստամարմին ընկերս, որին անդադար ըսթում եմ յիշեցնելով, որ ինքը բաւական ծանր է։ Ինչ անէ խեղճը, հակառակ իր ցանկութեան մռռացութեան մէջ է ընկնում, քանի որ խօսել սիրում է, երբ խօսակից ունի, իսկ այս անգամ վիճաբանութիւններից այնպիսի աղմուկ է տիրում ֆուրգօնի մէջ, որ խլացնում է ականջները։ Ձախ կողմս էլ դրած է փայտի մի կոպիտ արկղ, որի վրա դրած է գինով լի տիկը, որ բոլոր ժամանակ շարժողութեան մէջ է, դիպչում է ինձ, դիպչում է նոյնպէս ֆուրգօնի տախտակներին։ Նկատում եմ միւս ընկերոջս, որ մի բոպէ վերկենայ իր տեղից, քանի որ իր ամբողջ ծանրութեամբ նստել է ոտիս վրա ու կատարելապէս թմրեցրել։ «Անկարելի է վերկենալ», պատասխանում է նա, «երկու ոտներս էլ այս հայվանի տակն են»։ 1883 թւի ամառվայ ամենաշոգ օրերից մինն է։ Մեզանից ամեն մէկը անդադար հովհարում է իր գլխարկով, կամ թաշկինակով։ Կարօտել ենք ջրի, ծարաւը յաղթում է մեզ։ Խեղդվում ենք տօթից, ֆուրգօնի սպիտակ կտաւի ծածկոցը չէ կարելի բարձրացնել, դա մեզ մի փոքր ազատում է արևի այրող ճառագայթներից։ Մեզ հետ միասին գնում են մեծ քանակութեամբ ճանճեր, որոնք խումբ-խումբ բաժանված նստած են մեզանից մէկի գլխարկի, միւսի մէջքի վրա և այլն։ Նրանցով շատ է զբաղված մեզ հետ գտնվող մի 14—15 տարեկան տղայ։ Մի երկու հարուած էլ ինձ է հասնում ճանճեր բռնելու ժամանակ։ Մեր մէջ գտնվում են բաղդաւորներ, որոնց ի սրտէ նախանձում եմ, նրանք քնած են հանգիստ կերպով և չեն արթնանում, մինչև անգամ երբ ճանճերը ճղնում են նրանց քթի ծակերը մտնելու։ Մօտենում ենք մի հայ գիւղի և նրա միջով անցնելիս ֆուրգօնը կանգնում է։ Գոյնզգոյն շորերով կանայք վռազում են դէպի իրանց քարաշէն անշուք տնակները և ծածկվում հետաքրքիր աչքերից։ Նոյն տնակներից դուրս են վազում ոտաբոբիկ ու կիսամերկ երեխաներ ու շրջապատելով մեզ, հետաքրքրութեամբ նայում են մեզ վրա ու ժպտալով խօսակցում միմեանց հետ։ Ծերունի գիւղացին, ջրի ամանը ձեռքին, արագ քայլերով մօտենում է մեզ և «Աստուած օգնական» ասելով, դնում է գետնին իր ահագին մորթէ գլխարկը, լցնում է ջրով պղնձէ թասը ու առաջարկում նախ մեր ճանապարհակից վարդապետներին և ապա հերթով մեզ, մեր հասակի համեմատ։ Ֆուրգօնը նորից շարժվում է և նորից շարունակում է ընդհատված աղմկալի վիճաբանութիւնը։ Ֆուրգօնի ռխռխոցը, զանգուլակների ձայնը, ու ձիերի ոտքի տրոփիւնը ներդաշնակցում են նրան։ Ցաքացած թոզը դեղնագոյն գոլորշիով բարձրանում է ու շրջապատում մեզ։ Միայն ես չեմ մասնակից վիճաբանութեանը, գլխացաւը բռնել է ինձ։ Փոքր առ փոքր մեղմանում է ֆուրգօնի խռխռոցը և աւելի լսելի է դառնում խօսակցութիւնն ու աղմուկը։ Վերջապէս ձիերը կանգնում են և նրանց հետ ամենքն էլ լռում են։ «Գետին հասանք, Ախուրեանին մօտեցանք», լսելի է լինում միմեանց ետևից։ Ձիավարը իջնում է, մօտենում է ձիերին և առանձին խնամատարութեամբ ու քնքշութեամբ ձեռք է քսում ճակատներին, ուղղում է բաշը, սրբում է աչքերը ու ճարպիկութեամբ նորից բարձրանում նստում է իր տեղը, յետոյ վերցնում է գլխից իր գլխարկը, որ բոլոր ժամանակ ծուռ էր դրած ու երեք անգամ խաչակնքելուց յետոյ, խրախուսում է ձիերին, տալով նրանց զանազան ածականներ ու զգուշութեամբ ուղղում է նրանց դէպի գետը։ Ախուրեանը ընդարձակ գաչտի միջով անցնելիս, տարբեր պտոյտներով ու բազմատեսակ ճիւղաւորված, կղզիներ ու թերակղզիներ գոյացնելով, անընդհատ միանում ու բաժանվում է։ Հոսանքը ոչ դանդաղ է և ոչ կատաղի, ձայնը ոչ ողբ է և ոչ սպառնալիք։ Ձիերը կամաց-կամաց մտնում են ջրի մէջ ու ծածկվում կիսով չափ։ Գետը առ ժամանակ չփոթվում, փրփուրն ու ալիքները հեռանում են իրար, որով և խանգարվում է գետի միակերպ խաղաղ ձայնը։ Ձիերը անշտապ կերպով գնում են ջրի միջով և որքան մօտենում են ափին, այնքան արագացնում քայլերը։ Ձիավարը, որ վերջին մի երկու բոպէն յանձնել էր մեր ամենքիս վիճակը այս ազնիւ անասուններին, ափին հասնելուն պէս կարծես սթափվում է երկարատև թմրութիւնից։ Ցանկարծ շարժվում է տեղից, արտասանում է մի քանի խօսքեր, որոնց մէջ զգացվում է և հայհոյանք և փաղաքշութիւն։ Հարուածում է մտրակով աջ ու ձախ բոլորովին անտեղի, կարծես դրանով ցանկանում է ցոյց տալ մեզ իր շնորհն ու արհեստը երկիւղալի բոպէներում։ Շուտով դուրս ենք գալիս ջրի միջից։ Դարձեալ նորոգվում է ընդհատված խառն խօսակցութիւնը, որից շատ քիչ բան է հասկացվում։ Դարձեալ տաքացած փոշին, արևի այրող ճառագայթներ, աղմուկ, ռխռխոց, բայց Անին դեռ ևս չէ երևում։ Աջ ու ձախ երևում են տափարակ դաշտեր, լեռնադաշտեր, բլուրներ, որոնց վրա անկանոն կերպով ցիր ու ցան են արած գիւղեր ու արտեր։ Քրտնաթաթախ դէմքերով գիւղացիք մի տեղ հնձում են, միւս տեղ կալսում, իսկ մեծ մասամբ ցորենի հասկերը գլուխները թեքած սպասում են գերանդիին։

* —

Արևը կամաց-կամաց թեքվում է դէպի երկիր և իր տակ գտնված լեռները ծածկում է բոցավառ կայծերի տակ։ Նա կարծես մեզանից հեռանում է և մենք ազատվում ենք այնքան այրվելուց յետոյ։ Այժմ մեր առաջ նկատելի է լինում հորիզոնաձև տարածված մի պատ, որ ամեն մի բոպէից յետոյ մեծանում և բարձրանում է։ Մենք դիմում ենք դէպի այն պատը, դա Անիի պարիսպն է։ Վիճաբանութիւններ ու դատողութիւններ միանգամից վերջանում են։ Զիավարին սարսափում ենք որ «քշէ»։ Հիմա աւելի զգալի է նեղուածքը, մենք անհամբեր սպասում ենք ֆուրգօնից շուտով դուրս գալուն։ Դարձեալ մի քանի բոպէ և մենք արդէն կամարաձև ընդարձակ դռներից անցած պարսպի մէջն ենք գտնվում։ Բայց մենք միայնակ չենք։ Մեզանից մի փոքր առաջ հասել են Գէորգեան ճեմարանի աշակերտները իրանց տեսչի հետ։ Նրանք իրանց արևելեան ճաշակով գոյնզգոյն ներկած ֆուրգօնը մի կողմ թողած, կանգնել են մի աւերակի մօտ և խմբով երգում են «Անի քաղաք նոտեր կուլայ» երգը։ Ես երբէք այնպիսի անախորժ տպաւորութիւն չեմ ստացած, ինչպէս այս անգամ։ Բայց ոչ թէ այն պատճառով, որ նրանց երգն է անդուրեկան, բոլորովին ոչ։ Պատճառը երևի այն է, որ նրանց երիտասարդական աշխոյժ դէմքերը, առոյգ կազմուածքն ու եռանդով լի երգը ներկայացնում է մի հակապատկեր այս շրջապատող աւերակների, ուր մշանջենաւոր վայրենացած ամայութիւնն է տիրում։ Այս թէպէտև տխուր երգը ոչ թէ միայն չէ ներդաշնակում տարօրինակ տեսարանին, այլ վրդովում է նրա յաւիտենական հանգիստը, որ դարերի ընթացքում հաստատվել է։ Այս ընտիր ու հաղւագիւտ ճարտարապետական յիշատակները, որոնք կենդանի մարդկանց արուեստին են կառուցված, այժմ նոյնպիսի կենդանի մարդկանց գոյութիւնը խանգարում է նրանց անդորրութիւնը։ Հեռանում եմ ընկերներից ու ակամայ զգոյշ քայլերով անցնում եմ գետնի մէջ թաղված քարերի վրայով ու մօտենում մի մատուռի աւերակին, որի միմիայն մի քառորդը դեռ էլի ամուր կանգնած է, իսկ երեք քառորդը այստեղ և եթ քարերի մի քանի կոյտերի են փոխվել։ Սրանց միջից անդադար դուրս են ցայտում խլէզներ, որոնք իրանց զոյնով չեն զանազանվում իրանց բնակարաններից ու մի ակնթարթում անցնում են քարից քար, կանգ առ-

Մուտքը չատ բաւարար կը լինի. տօմսակները բոլորը գրեթէ ծախված էին, իսկ բուֆետում «կրթված» թուրքերը և ստորին հասարակութիւնը ջերմեռանդութեամբ էին վերաբերվում դէպի ըմպելիները:

Պ. Զաքարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Կօջօր, 4 սեպտ.

Կարդացի «Մշակ» լրագրի № 97-ի մէջ Կօջօրից մի նամակ Ականատես ստորագրութեամբ: Պ. Ականատեսը գրում է. Ա) «պ. Վարդիկեան ամեն տարի երգել է Կօջօրի հայոց եկեղեցում և ստացել է դրա համար որոշ գումար. սակայն այս տարի ոչինչ չէ ստացել տէր Եղնիկ Երզնկեանցից: Բ) Նա ոչինչ վարձատրութիւն չէ տուել և նրա ընկեր պ. Երամեանցին: Գ), Պ. Ականատեսը ասում է, որ երկուքը—պ. Վարդիկեան և Երամեան—վարել են այս տարի եկեղեցում ծանր պաշտօններ և Դ) Տէր Եղնիկը շրջեցնում է մի մատեան փող հաւաքելով յօդուտ եկեղեցու երգչական խմբի, բայց թէ ինչ բանին է գործածվում այդ փողը—դա հետաքրքիր էր իմանալ:»

Թէև ես չեմ կարծում, որ Կօջօրում հայ մարդ լինի, որ չը գիտենայ և ծանօթ չը լինի այդ հաշիւների հետ, բայց թող կրկնեմ, որ պ. Ականատեսն իմանայ:

Նախ, ահա 14 տարի է, որ ես ամառ ժամանակները քահանայագործութիւն եմ անում Կօջօրի հայոց եկեղեցում. պ. Վարդիկեան ամեն տարի չէ երգել այնտեղ, բայց երբ եղել—երգել է, ես եմ նրան հրաւիրել, որպէս տիրացու և երգիչ, հետևապէս և առաջուց նրա հետ պայմանաւորված վարձը 20-ից 30 ռուբլի միչտ հատուցել եմ, ինչպէս այդ երևում է իւրաքանչիւր տարվայ հաշուեմատեանից, երբ նա եղել է: Անցեալ տարի նա չէ եղել Կօջօրում և չէ երգել. այս տարի էլ ես նրան ոչ հրաւիրել և ոչ խոստացել կամ պայմանաւորվել եմ որոշ կամ անորոշ գումար տալ: Կօջօր գնալուցս առաջ պ. Վարդիկեան արդէն գտնվում էր կոյս Թայիրեանցի հետ Կօջօրում, որի հաշուով և եկել էր Ս. Պետերբուրգից: Սրբակրօն կոյսը խնդրեց ինձ երգիչների սենեակում տեղաւորել պ. Վարդիկեանցին ասելով. «նա ձեզ ուտելիքի կողմից ոչինչ ծանրութիւն չի լինի, որովհետև մեծ մասը ինձ մօտ, կամ իմ հաշուով ուրիշ տեղ կը կերակրվի, իսկ այդտեղ բնակվելու փոխարէն նա կերգէ եկեղեցում»: Ես պատասխանեցի որ պ. Վարդիկեան երգելով ինձ կը պարտաւորացնէ և կը ստանայ մի բան էլ: Իսկոյն կարդաղրեցի, որ մի գանձանակ շրջեցնեն պ. Վարդիկեանի և պ. Երամեանի օգտին, որը և շրջեցնում ու բաժանում էին երկուսը իրանց մէջ: Եթէ պ. Վարդիկեանցին ես խոստացած լինէի որոշ գումար, նա ինքն մի խօսք անգամ կասէր ինձ այդ մասին իր վերջին հրաժեշտը ինձ տալիս: Բայց գաղտնիքը նրանումն է, որ պ. Վարդիկեանի հեռանալուց յետոյ է լինում այդ հարցը և այն կոյս Հռիփսիմէն է զարթեցնում, ասելով, որ պ. Վարդիկեանցին պէտք է վարձատրել և որ այդ փողը պէտք է յանձնվի իրան—կոյսին: Թէ ինչու. այդ բանը մնաց ինձ համար անբացատրելի:

Երկրորդ՝ պ. Երամեանցին ես եմ որպէս տիրացու տարել Կօջօր. բայց և այնպէս ոչինչ առանձին վարձատրութիւն չեմ խոստացել, բացի գանձանակից և պատճառն էլ լաւ յայտնի է նրան, որովհետև անցեալ տարի, երբ ես կամենում էի Նրան երգչաց խմբի մէջ ընդունել, նա պահանջեց 20 ռուբլի վարձատրութիւն ամբողջ ամառվայ համար. բայց ես նրան բացատրելով երգչաց խմբի վրա եղած ծախսի առաւելութիւնը, պատասխանեցի, որ չեմ կարող վարձ տալ, ոչ միայն իրան, այլ և ոչ մի երգչին, ուստի և չընդունեցի: Այս տարի ես նոյնը կրկնել և ասել եմ նրան, որ գանձանակից աւելի ոչինչ չի ստանայ և ճշմարիտն ասած, նա մինչև պ. Վարդիկեանցի վարձատրութեան հարցի զարթեցնելը՝ ոչինչ էլ չէր ասում:

Երրորդ՝ պ. Ականատեսը ասում է, որ երկուքը—պ. Վարդիկեան և Երամեան—այս տարի վարել են եկեղեցում ծանր պաշտօններ: Այդ խօսքը ինձ չատ զարմացնում է, որովհետև ամենին յայտնի էր, նոյն իսկ հայը բարեկարգչին, որ այդ երկուքը մասնակցում էին միմիայն չաբաթ երեկոյեան ժամերգութեան և կիրակի պատարագին և ոչ, որպէս տիրացուներ, ամենայն օր առաւօտեան և երեկոյեան. այնպէս որ ես մենակ ժամերգութիւն էի կատարում, իսկ նրանք առաւօտեան միչտ քնած էին լինում և երեկոյեան միչտ զբօսնում էին, էլ ուրն է ծանր պաշտօնը:

Եւ չորրորդ՝ Կօջօրում երգեցիկ խումբ պահելու համար 1876 թուից սկսած կամաւոր նուէրներ եմ ժողովում մատեանով հայ ժողովրդականներից, որովհետև եկեղեցու երեցփոխանները եկամուտի սակաւութիւնը պատճառ բերելով, երգեցիկ խմբի համար մի կոպէկ անգամ ծախս չեն անում: Մատեանի ճակատին գրված է ժողովարարութեան նպատակը, որ է յօգուտ քահանայի երգեցիկ խմբի սննդեան ու պահպանութեան, և իւրաքանչիւր տարվայ վերջը մանրամասնաբար այդ մասին հաշիւ տուած ու գրված է լինում նոյն ժապաւենեալ մատենում նախ՝ մտից ընդհանուր գումարը և ապա ծախսը, որը հետևեալ տարին ստորագրողները տեսնում են: Բացի այս իւրաքանչիւր ամառ նախընթաց տարվայ մտից և ծախսից համառօտ հաշուէկշիռը մաքուր գրած և եկեղեցու պատից կախած է ի տես հայ ժողովրդեան: Ես զարմանում եմ, որ ինչպէս պ. Նամակագիրը ականատես չէ եղել: Եթէ նա բարեհաճէր նայելու հաշուէկշռին, որը այժմ էլ կախած է եկեղեցու պատից, կը տեսնէր, որ այդ կամաւոր նուէրները այնքան սակաւ և այնքամ դժուարութեամբ են ժողովվում, որ ես իմ միջոցներից եմ լրացնում պակասորդը: Այս ասրվայ կամաւոր նուէրների ժողովելը դեռ շարունակվում է և յուսալի չէ, որ գումարը հասնի անցեալ տարվան. ուստի ես առաջ եմ բերում անցեալ 1890 թուի մուտքը և ծախսը, որպէս զի պ. Ականատեսը, ի նկատի առնէ, թէ այդ գումարն ինչ բանի վրա է ծախսվում և թէ ես ոչինչ օգուտ չունեմ: Ցանկալի էր, որ այսուհետև եկեղեցու երեցփոխանը, կամ տեղական ժողովրդականներից մի քանիսը և կամ նոյն իսկ Ականատեսը, յանձն առնէին կամաւոր նուէրների ժողովելը և երգեցիկ խմբի սննդեան ու պահպանութեան հոգացողութիւնը, իսկ ինձ ազատ թողնէին: Անցեալ տարվայ կամաւոր նուէրներից մուտք եղել է 304 ռուբլի, իսկ ծախս—378 ռուբլի, այսպէս՝ 150 ռուբլի տուած է վանքի միաբանութեան: Ուրեմն հատ մեծ և փոքր երգիչների պահպանութեան և սննդեան համար $2^1/_2$ ամսվայ ընթացքում, իւրաքանչիւրին ամսական 10 ռուբլի հաշուելով, ծախսված է 200 ռուբլի: Երգիչների երթևեկութեան համար Կօջօրից Թիֆլիս և հակառակը տուած է հանրակառքին 28 ռուբլի, բոլորը—378 ռուբլի: Այս հաշուից երևում է, որ ծախսն աւելի է 74 ռուբլի, որը հատուցել եմ ես: Բայց թէ ինչի՞ այս տարի միմիայն այդ երկու պ.պ. երգիչների վարձատրութեան հարցը զարթեցել և լրագրի նիւթ դարձել, դա պէտք է վերագրել մարդկանց ապերախտութեան և մի տեսակ անձանց փառասիրութեան, որոնք սիրում են բարերար լինել ուրիշի հաշուով:

Ինչ վերաբերում է լրագրի նոյն համարի երկրորդ լուրին և երեցփոխանի հաշիւների քննութեանը, պէտք է ասել, որ ես ոչինչ կապ չունեմ նրա հետ, և պ. երեցփոխանը՝ փոխանակ կօնսիստորիային գանգատվելու իմ կողմից նրան արած մի քանի արդար նկատողութիւնների համար, որոնք վերաբերում էին եկեղեցու հաշիւներին,—կրկնում եմ, լաւ կանէր, վաղօրօք իր ռամեայ պաշտօնավարութեան հաշիւները մաքրէր և ներկայացնէր ուր հարկն է: Ցարդոյ խմբագիր, խնդրեմ այս նամակիս, որպէս պատասխան պ. Ականատեսին, տեղ չնորհէք ձեր «Մշակ» լրագրում:

Կօջօրի հայոց եկեղեցու Եղնիկ քահ. Երզնկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 7-ին

Թոյլ տուէք ձեր պատւական լրագրի միջոցով բացատրել հայ հետաքրքրվող հասարակութեանը այն հանգամանքը, թէ ինչու ես ստիպված եմ չը մասնակցել հայ դերասանական խմբին:

Յունիսի վերջին գիւղից վերադառնալով Թիֆլիս, երեկոյեան գնացի Ազնուականների Բանկի այգին՝ ուր լսեցի, թէ ընկերներս արդէն հրաւիրվել են թատրօնական կօմիտեից: Շուրջս նայելով տեսայ, որ մի սեղանի շուրջը նստած էր նոր կօմիտէն, իսկ փոքր հեռու տեղական բոլոր դերասանները, որոնցից ամեն մէկին առանձին առանձին կօմիտէն կանչում ու խօսեցնում էր պայմանների մասին: Կօմիտէն այդ երեկոյ ինձ տեսաւ, մինչև անգամ նրան յիշեցրին իմ մասին, բայց ինձ հետ խօսող չեղաւ: Միւս երեկոյ դարձեալ գնացի նոյն տեղը. կօմիտէն այդ գիշերը վերջացրեց մնացեալների հետ, բայց ինձ հետ դարձեալ ոչ մի խօսք: Այդ երեկոյից համոզվեցայ, որ դրանք մտադրութիւն չունեն ինձ հրաւիրելու և ճիշդ է եղել ինձ հաղորդած լուրը թէ՝ «Միրաղեանցը չը պէտք է լինի խմբումը»: Տխուր տպաւորութեան տակ թողի Թիֆլիսը և

նում, չռում աչիկները ուղղակի դէպի մայր մտնող արեգակը և դարձեալ յետ վազում թագնվում: Որքան յարմարեցրած է այս կենդանի արարածների ներկայութիւնը անկենդան կուտակների հետ,—որքան ներդաշնակութիւն....

Արևը մեծացած ու կարմրած հասել է հորիզոնին ու կատարելապէս վառվել: Ամբողջ շրջակայքում տիրել է մեղմութիւն: Աւերակների երկայն սուներները տարածվել են անհարթ դեռնի վրա, ուր թռչկոտում են մորեխները և ուր սպիտակ ու կարմիր, կապոյտ ու դեղին թիթեռները անցնում են ծաղկից ծաղիկ:

Վանահօրը իր աղքատ բնակարանի հետ միասին անհանգիստ ենք արել: Շատ պարզ երևում է, որ նրանք սովոր չեն այսպիսի մեծաքանակ անկոչ հիւրերի, որոնք անդադար մածուն են պահանջում: Օրը մթնում է: Մենք ամենքս հաւաքվում ենք վանահօր բնակարանում: Ամբողջ երեկոն պարելով, ծիծաղելով ու ուտելով անցկացնելուց յետոյ, քնելու ենք պատրաստված: Մէկը փալաս է գտել ու փռել սենեակի յատակի վրա, միւսը իր եափունջիի մէջն է փաթաթվել, երրորդը իր վերարկուի վրա ունի յոյս և այսպէս ամենքս պառկում ենք և անշուք միակ ճրագը հանգչում է: Մի տեղից լսելի է լինում ծածուկ քչփչոցը, որին հետևում է և զսպած ծիծաղ, միւս տեղ երևում են ծխախոտի կրակներ: Աջ կողմիցս հաղիւ հասնում է ականջիս ջերմեռանդ աղօթքը, այնտեղ պառկած են հայր-սուրբերը: Դարձեալ մի քառորդ ժամ և սենեակում տիրում է խաղաղութիւն: Արթուն եմ միմիայն ես: Դիտաւորութիւն չունեմ քնելու, սպասում եմ կէս գիշերին, երբ ընկերներս խոր քնով քնած պէտք է լինեն:

—

Վեր եմ կենում տեղիցս մեծ զգուշութեամբ, բաց եմ անում սենեակի դուռը և դուրս եմ գալի: Բնութեան մէջ տիրում է անթափանցելի խաւար, երկնքի երեսը ծածկվել է սև ամպերով: Աչքս անզօր է բան տեսնելու, շուրջս տիրում է միակերպ սև տարածութիւն: Երկինքն ու երկիրը խառնվել են, իրարից չեն որոշվում: Հանում է ականջիս մի խուլ ստորերկրեայ ձայն. դա իր մելամաղձոտ միակերպութեամբ ճնշում է սիրտս: Դա Ախուրեանն է, որը ժայռոտ անտառների միջով անցնելիս, այսպիսի գիշերներ անգամ չէ լռում: Ցանկարծ դուրս է ցայտում խաւարի միջից հրեղէն ժապաւէնը և վիրաւորված օձի նման մի քանի պտոյտներ անելուց յետոյ հանգչում է: Մի քանի վայրկեանից յետոյ լռում է հեռաւոր որոտումն և նորից ամենայն ինչ խաւարում է: Կանգնած եմ անշարժ ու անձայն և նայում եմ անվերջ սև քաոսի մէջ: Դարձեալ դուրս են ցայտում միմեանց ետևից հրաչէջ բոցերը, լուսաւորում են երկիրը և բօպէպէս հանգչում: Անսպասելի կերպով սաստիկ քամին մռնչալով անցնում է մօտովս, իր հետ տանելով փոշի ու աւազ, պոկում է գլխից գլխարկս ու անհետացնում: Քամին աստիճանաբար սաստկանում է, դա կորցրել է իր գլուխը, փչում է ամեն կողմից, պտոյտներ է անում, երբեմն չաղցնում է, երբեմն մռնչում է: Առժամանակ դադարելուց ու լռելուց յետոյ, մի ուժգին հարուածով դղրդվում է եթերքը, աչք կուրացնող հրաբխային լոյսը տարածվում է երկրի վրա, ոչնչացնում է խաւարը և տեսանելի է դարձնում երկինքն ու երկիրը, մանաւանդ երկինքը, որտեղից լսվում է թնդանօթի խլացուցիչ ձայնը իր գաղտնալի արձագանքի հետ: Երկիրը շարժվում է, դողում է և կարծես երկիւղից կուչ է գալիս: Այս վայրկեանին բացվում է աչքիս առաջ մի անսովոր տեսարան, ահա այժմ միայն տեսնում եմ Անի: Բնութեան այսպիսի խորհրդաւոր ճգնաժամին դա ցոյց է տալի իր գոռող դէմքը, բոլորովին չը քաշվելով իր մահկանացուներից արհամարված թշուառ վիճակից: Այս կարճատև տեսարանը այնպիսի տպաւորութիւն է գործում և այնպէս թափանցում է ուղեղիս մէջ, որ անկարող եմ երբ և իցէ մոռանալ:

Ի՞նչ խրոխտութեամբ բարձրացրել է դէպի երկինք սիւնաձև ահագին աշտարակը իր գլուխը և դիտում է իր շուրջը և ինչ տխուր կերպարանք է ընդունում, երբ նրա աչքին է ընկնում երբեմն իր նման կանգուն ու վսեմ, իսկ այժմ գլորված ու փշրված միւս աշտարակը: Ահա աջ կողմ լայնատարած ու մէջքն ուռցրած միջնաբերդը, որի խրնամքին են յանձնված մատուռների ու զանազան շինութիւնների կմախքները և որի ետևում բացված է ժայռոտ մութ անդունդը, ուր հոսում է տխուր անցեալի միակ կենդանի մնացած ակառատես Ախուրեանը: Ահա և ձախ կողմ, աննման ստեղծագործութեան ուրուական-մայր-եկեղեցին: Ինչպէս մարդկային դեղեցիկ մարմին, բայց զբրկված երբեմն պսակիր գլխից՝ խորշելու չափ այլանդակ է, նոյնպիսի տպաւորութիւն է գործում և մայր-եկեղեցին: Նա զրկվել է կաթուղիկէից, ամենագլխաւոր զարդից, որ առհասարակ տաճարի փառքն ու վսեմութիւնն է և որ երկիւղածութիւն ու Աստուածապաշտութիւն է ներշնչում հաւատացեալներին ու անհաւատներին: Մայր-եկեղեցին, որի անունը սերունդից սերունդ անցնելով մնացել է անխախտ, կանգնած է վիրաւոր ու քայքայված մարմնով և ցոյց է տալի գեղատեսիլ քանդակներ ու արձանագրութիւններ, իբրև միակ հետքեր անցած-անվերադառնալի պարծանքի: Ահա այնտեղ հեռու ձորի գլխին խղճալի պատկեր. այնտեղ իր բարձրութիւնից վայր գլորված ու կործանված արքայական պալատներն են, որոնց նրբաքանդակ պատերի մէջ երբեմն իշխողների խրոխտ ձայնը յաւիտենական քունն է մտել: Դա նման չէ ոչ տխուր գերեզմանին, ոչ հինաւուրց քարայրին, այլ դա մի խղճալի ու վրդովեցուցիչ այլանդակ տեսարան է: Սրանից մի փոքր դէնը, աշտարակից ոչ հեռու երևում է կաթուղիկոսարանը: Դրա փլատակների մեծ մասը տարածված ու ցրիւ է տուած դեռնի վրա: Ողջ է մնացել միայն պատուանդանը, այն էլ անշուք ու անարուեստ:

Փայլակը փայլակի ետևից, կայծակը կայծակի ետևից չեն սպառվում և ես գտնվում եմ մի կախարդական աշխարհի մէջ, որը մի և նոյն ժամանակ և տեսանելի է և անտեսանելի: Երկնքի խռովութիւնը սաստկանում է ու սարսափեցնում է երկիրը: Ժամանակ առ ժամանակ ընդմիջում է խռովութիւնը և լսելի է լինում անվրդով Ախուրեանի միանչիւն ձայնը: Դիտում եմ չուրջս և դարձեալ նոր-նոր ուրուականներ են կարծես բուսնում երկրի միջից, եկեղեցիների, մատուռների, պալատների քարուքանդ եղած հետքեր, որոնք իրանց վաղեմի գոյութեան իբրև յիշատակ, չեն ցանկանում բոլորովին ջնջվել աշխարհի երեսից: Մի փոքր հեռու տարածվել է ընդարձակ ու հոյակապ պարիսպը, որ դարերի ընթացքում նոյնպէս ենթարկվել է պատժի: Դա, որ իր կոչման համապատասխան պէտք է պաշպանէր իրան խնամքին յանձնած անգին հարստութիւններ, դա, որ պաշտպան պէտք է հանդիսանար երկիրգի և արտաքինի միջոցին, ինքը նոյնպէս կաթուածահարի նման զրկվել է ոյժից: Բայց որքան արուեստ ու ճարտարութիւն, որքան ռազմագիտական կանոններ են գործ դրած սրա կառուցման համար...

Ահա այնտեղ հեռաւոր բարձրաւանդակի վրա, գետի միւս կողմը նշմարվում են զանազան շինուածքներ, բայց անկարող եմ որոշել դրանց ինչ լինելը: Նայում եմ դարձեալ չուրջս և տեսնում եմ անհարթ չոր դեռնի վրա մաշված քարեր, մամռապատ կոյտեր և այս բոլորն իր միակերպութեամբ այնպիսի ճանձրացուցիչ է, ինչպէս անթիւ անգամ կրկնված մի և նոյն նախադասութիւնը: Այս ընդհանուր տեսարանը ուզում եմ նմանեցնել վաղուց մոռացված հինաւուրց գերեզմանոցին, բայց չէ որ գերեզմանոցում գոնէ մահ է տիրում և կենդանի մարդու վրա աղդում է տխրութիւն ու ունայնութիւնը: Բայց սա չէ տխրեցնում, այլ մի տեսակ անբացատրելի վրդովմունք ու երկիւղ է յարուցանում մարդու սրտի մէջ: «Այս է Անին» արտասանում եմ ես:

Փչում է նորից կատաղի քամին և աւազի հետ միասին բերում է և անձրևի կաթիլներ: Օդը գոլորշիանում է, անձրևը սաստկանում է և ես ստիպված եմ սենեակ վերադառնալու:

Գ. Բաշինջաղեան

հեռացայ գիւղը։ Օգոստոսի 11-ին վրաց թատրոնական կոմիտէից ստանում եմ հրաւէր մասնակցելու իրանց խմբին։ Նոյն ամսի 15-ին հասնելով Թիֆլիս, երեկոյեան գալիս եմ թատրոնական կոմիտէի ժողովատեղին (թատրոնական բուֆէտը). եկան և կոմիտէի անդամները, որոնք բարևեցին և անցան մօտովս, բայց դարձեալ ոչ մի խօսք։ Բայց իմ բարոյական պարտականութիւնս կատարելու համար ես անձամբ դիմում եմ նրանց ասելով «թէ ես վրաց կոմիտէից ստացել եմ հրաւէր, իսկ ձեզանից ոչ, բայց քանի որ այս տարի լինելու են հայ ներկայացումներ, ես ինքս եմ դիմում առաջ ձեզ, որովհետև բարոյապէս պարտաւոր եմ, ինչպէս ամեն մի հայ, ծառայել մայրենի բեմին և եթէ դուք կը բարեհաճէք ու պէտք ունիք, ես կը մնամ ձեզ մօտ»։ Այդ երեկոյ ինձ խօսեցրին ռօճկի մասին, ինչպէս վերջը երևաց միայն ձեի համար։ Ես պահանջեցի 70 ռուբլի և չորը իմս, կամ 60 ռուբլի և չորն իրանցը (որովհետև կէս բենեֆիս չեն տալիս), այսինքն այնքան, ինչքան նշանակել էին տեղական առաջնակարգ դերասաններին, իսկ իրանք առաջարկեցին 50 ռուբլի և չորը իմս, այսինքն այն, ինչ որ նշանակել էին երկրորդականներին և երրորդականներին։ Այդ երեկոյ մեր մէջը համաձայնութիւն չը կայացաւ. և ինչպէս կարող էր կայանալ, քանի որ այստեղ միայն փողի խնդիր չէր, այլ և պատի և ինքնասիրութեան... Այդ երեկոյ հարցն այդպէս էլ մնաց և դրանք խոստացան ինձ միւս օրը տալ վերջին պատասխանը։ Միւս երեկոյ գալիս եմ նոյն տեղը համոզված լինելով, թէ մենք պէտք է համաձայնվենք փոխադարձ զիջողութիւն անելով. բայց ես սխալվեցայ. այդ մարդիկ ինձ ապշեցրին իրանց պատասխանով՝ «կոմիտէտը վճռեց, որ ձեզ չէ կարող հրաւիրել, որովհետև ձեզ համար բիւջէտ չը կայ։» Ես մնացի զարմացած և ակամայ հարցրի՝ «իսկ երէկվայ 50 ռուբլին էլ չը՞ կայ։» «Այժմ այն էլ չը կայ, պատասխանեցին, որովհետև այս բոպէիս պ. Սարդարեանցին աւելացրինք 5 ռուբլի և բիւջէտը փոխվեց։» Այս բոլորը եղելութիւն է և ոչ մի բառ չեն կարող հերքել։ Այսպիսի պատասխանից յետոյ դրանք իրաւունք չունեն տարածելու թէ՝ առաջարկել են 50 ռուբլի և ես մերժել եմ. ընդհակառակն երկրորդ գիշերը այն առաջվայ 50 ր. էլ մերժեցին. թող հաւատացած լինեն կոմիտէի անդամները, որ եթէ նրանք սկզբից ուրիշ դիրք բռնէին, ես գուցէ. կը համաձայնվէի և 40 ռուբլով ծառայել իմ սիրած բեմին։

Ի հարկէ, անտեղի և մինչև անգամ ծիծաղելի է մի դերասանի կողմից նեղանալ ու պահանջել, թէ ինչու նրան այս ինչ անտրբպրեհեսրը կամ այն ինչ ընկերութիւնը չէ հրաւիրում։ Դերասանի հրաւէրը կախված է հրաւիրողի հայեացքից, հասկացողութիւնից, վերջապէս քէֆից. նա մանաւանդ, որ միշտ աչքի առաջ ունի լաւագոյններին ընտրել։ Բայց գլխաւոր հարցը դրանում չէ թէ ինձ մերժեցին, այլ որ—այդ մարդիկ տարածել են հասարակութեան մէջ զանազան լուրեր թէ՝ «Միրզեանցին բարոյապէս պատժելու համար չեն ուզում հրաւիրել, որովհետև նա երկու սեզոն մասնակցել է օտար խմբին, թէ հայ հասարակութիւնը Նրան չէ ուզում տեսնել բեմի վրա դարձեալ նոյն պատճառով և այլն»։ Գեղարուեստը ընդհանրապէս և բեմական արուեստը մասնաւորապէս պատկանում է ընդհանուր մարդկութեանը, նա քարոզում է մի և նոյն ճշմարտութիւնը ամեն լեզուով։ Դերասանը չէ կարող սահմանափակել իր գործունէութիւնը մի որոշ հասարակութեան մէջ, երբ նա իմանում է մի քանի լեզու։ Այո, ես ծառայել եմ գեղարուեստին վրաց բեմի միջոցով, երբ հայ բեմ չէ եղել. կարծում եմ ուրախալի պէտք է լինի մի հասարակութեան համար, երբ դերասանը չունենալով սեփական բեմ, զարգանում է մի այլ բեմի վրա։ Ուրիշ բան է, եթէ լինէր հայ բեմ, ինձ հրաւիրէին և ես դերադասէի օտարինը, ուրեմն հայ հասարակութիւնը առիթ չունի ինձանից տրտնջալու։ Վերջացնելով նամակս չեմ կարող ծածկել իմ վիշտս, որ վերջապէս կայ հայ բեմ, ունի մի քանի դերասաններ, բայց նրանցից միայն մէկը ստիպված է օտարին ծառայել...

Ցանկանում եմ կատարեալ աջողութիւն իմ մայրենի բեմին, որն ինձ սննդել ու մեծացրել է. յոյս ունեմ, որ մի ժամանակ, երբ անձնական հաշիւները կը վերանան, ես դարձեալ բաղդ կունենամ մի օր հայ հասարակութեանը մատուցանել իմ ծառայութիւնը հայ բեմից։

Գեղէօն Միրզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հանգուցեալ Վ. Գարշինին լաւ ճանաչում է հայ հասարակութիւնը. նրա վէպիկների նշանաւոր մասը թարգմանված և տպված է «Մշակի» էջերում։ Այժմ մեր առջևն է դրած նրա «Четыре дня» (չորս օր) վէպիկը, որն առաջին անգամ հռչակեց Գարշինին։ «Չորս օրը» մի զինուորի պատմութիւն է, որը վիրաւորված ընկած է պատերազմի դաշտում, և իր չորս կողմը ընկած տեսնելով դիակներ, մտածում է պատերազմի սարսափի վրա։ Մարդկութիւնը մեր դարում համոզված է կռի անբարոյականութեան մասին, բայց նա չը ստեղծեց մի այնպիսի կազմակերպութիւն, որը չը ստիպէր հաղարաւոր մարդկանց, իրանց համոզմունքի դէմ, վերցնել հրացանը և գնալ իր նմաններին սպանելու.... Թարգմանիչը շատ թոյլ է ռուսերէնում։ Մենք զարմանում ենք, թէ ինչպէս այդպիսիները յանդգնում են ձեռնամուխ լինել թարգմանութիւններին. ահա ինչպէս է թարգմանել այս նախադասութիւնը. какой-то дворникъ растолкалъ толпу—դրռնապանի մէկը եղելութիւնը ամբոխին պատմելուց յետոյ (եր. 11). муравей—մեղու (եր. 11). рѣдкая длинная борода—հազուադիւտ երկարութիւն ունեցող միրուքով, կրկնակի ռուսերէն բացասութեան ձևը թարգմանված է բացասական ձևով. я не могу не думать о немъ—ես չէի կարող մտածել նրա մասին (եր. 18)։ Պէտք է նորից թարգմանել այս սիրուն գրուածքը։

—

Սեպտեմբերի 8-ին, կիրակի, ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում բացվեց ռուս դրամատիական խմբի ներկայացումների սեզօնը։ Խաղում էին «Женитьба Бѣлугина» յայտնի պիէսան։ Ժողովուրդ շատ քիչ կար թատրոնում։

—

«Тифл. Листокъ» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսի երաժշտական մագաղինի տէրը, պ. Լանկո, իր առևտրական տան 15 ամեայ գոյութեան տարեդարձի առիթով նուիրեց քաղաքի աղքատների օգտին 300 ռուբլի։ Այդ գումարը, նուիրողի ցանկութեամբ, պէտք է բաժանվի հեռևեալ կերպով. ռուս և վրացի աղքատներին 100 ռուբլի, լութերականներին 50 ր., հայերին 50 ր., կաթոլիկներին 50 ր., հրէաներին 25 ր., և մահմեդականներին 25 ռուբլի։ Բացի սրանից պ. Լանկո նուիրել է դարձեալ 50 ռուբլի Ռուսաստանի ներքին նահանգներում անաջող հունձից վնասվածների օգտին։

—

ԹԻՖԼԻՍԻ «Պուշկինեան» հռչակաւոր թատրոնը շուտով փակվելու է, քանի որ ռուսաց օպերէտային խումբը վերջացնում է իր ներկայացումները, իսկ տիկին Լասալ, ինչպէս լսում են տեղական լրագիրները, ուղևորվում է դէպի Կրիմ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, 15 օգոստոսի

Տակաւին չէ լրացել մի ամբողջ տարին այն օրից, երբ «Տարազ» պատկերազարդ շաբաթաթերթը տպել էր այն մարդու կենսագիրը, որը արտասահմանից վերադառնալով՝ գալիս էր Պարսկաստան։ Եւ այդ անձնաւորութիւնը արդէն չը կայ. նա վախճանվեց։ Այդ կորուստը շատ և շատ զգալի է, թէ Պարսկաստանի և թէ հայերի համար։

Հանգուցեալ Ջհանգիր-խան Ենակօլօպ-Մամիկոնեան, որի մահվան մասին հեռագրված է «Մշակին», Պարսկաստանի վէզիր-սէնայի, գեղարուեստների նախարար էր։ Վերջին ժամանակները նա ստացաւ նաև գուբխանէի (զինարանի) գլխաւորի պետական աստիճանը։ Ջհանգիր-խանը վախճանվեց 66 ամեայ հասակում, օգոստոսի 9-ին (21-ին) ժամը 2-ին առաւօտեան։

Յուղարկաւորութիւնը կատարվեց օգոստոսի 10-ին, առաւօտեան 10 ժամին։ Ամբոխը, որը պատկանում էր ամեն աղգութեան, խուռն բազմութեամբ խմբվել էր հանգուցեալի տանը և տան չուրջը։ Կառավարութիւնից ուղարկված էին՝ Ֆովզ-զաղրին անուանված զօրախումբը և 200 հոգուց բաղկացած հեծելազօրքի մի խումբ, հանդերձ պարսկական երաժշտութեամբ, որոնք պիտի զագաղի հետ մինչև եկեղեցի գնային, որը հանգուցեալի տնից մօտ մի վերստ հեռու է։ Ժամը 10-ին դագաղը, տէրութեան կառքի մէջ ամփոփված, երկու կողմերից զինուորներով ուղեկցված՝ դիմեց եկեղեցին։ Առջևից գնում էր հեծելազօրքը, հանդերձ երաժշտութեամբ։ Թաղումն տեղի ունեցաւ նոյն օրը եկեղեցու դաւթում։ Դագաղը հողին յանձնելուց յետոյ դամբանականներ խօսեցին՝ պ.պ. Ա. Գօրգեանց և Յ. Մասէհեանց։ Թաղման հանդիսի վերջում զինուորները, ի պատիւ հանգուցեալի, հրացաններից էին արձակում։

Հանգուցեալը սիրված և յարգված էր ամենքից՝ թէ հայից և թէ պարսկից։ Նա մեծ համարում ունէր և պարսից բարձր հասարակութեան աչքում։ Էմին-սուլթանը և նոյն իսկ Շահը տխուր զգացմունքով ընդունեցին Ջհանգիր-խանի մահվան բօթը։ Հանգուցեալը միմիայն բարի յիշատակներ է թողել իր հայրենակիցների մէջ. քանիսին նա օգնեց, քանիսին միջոց տուեց առաջ գնալու, քանիսը պարտական են նրան իրանց ապրուստով, իրանց դիրքով։

Հանգուցեալը անժառանգ էր. այժմ նրա տունը կնքված է և մահվան մասին հեռագրված է արդէն հանգուցեալի եղբօր, Նարիման-խանին, որը պարսից դեսպան է Վիէննայում, որպէս զի այդ վերջինը գայ և իր հանգուցեալ եղբօր գործերը կարգադրէ։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Վիէննայի Polit. Corresp.» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ ռուսաց դեսպան Նելիդով, ի պատիւ Թիւրքաց մայրաքաղաքից հեռացող ֆրանսիական դեսպան կոմս Մօնտեբելլօի օգոստոսի 20-ին հրաժարական տօնախմբութիւն սարքեց Բէօիւկ-Դէրէում, ռուսաց դեսպանութեան ամարային պալատում։

—Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններին համեմատ, բուլգարական մինիստր Գրէկով ամեն միջոցներ գործ է դնում համոզելու դիպլոմատներին, որ նրանք համերաշխ կերպով գործեն յօգուտ պրինց Ֆերդինանդի։ Բացի դրանից նա աշխատում է համոզել սուլթանին, որպէս զի այդ վերջինը Ֆերդինանդ պրինցին ընդունէ պաշտօնապէս։

—Սեպտեմբերի 4-ի տարեդարձին նուիրված մի յօդուածում «Fremdenblatt» լրագիրն ասում է, որ Ֆրանսիան կրկին զօրեղ պետութիւն դարձաւ և վերադարձրեց իրան այն դրութիւնը, որ մի ժամանակ գրաւած ունէր նա եւրօպական պետութիւնների շարքում։ Այդ հետևանքին Ֆրանսիան հասաւ, թէ ներսին և թէ արտաքին գործերի մէջ իր բռնած զգոյշ և չափաւոր քաղաքականութեան շնորհով։ Լրագրի խօսքերով, Ֆրանսիական հանրապետութիւնը պէտք է անշեղ ընթանայ այդ ճանապարհով, եթէ չէ կամենում ձեռքից փախցնել չափազանց ծանր աշխատանքներով գնով ձեռք բերած արդիւնքները։ Ֆրանսիան չը պէտք է մոռանայ, որ անաջող պատերազմը նրա համար կատարելապէս կորստաբեր կը լինի և կարող է մինչև անգամ հանրապետական վարչական ձևի վերացման պատճառ դառնալ Ֆրանսիայում։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանի հրամանով մի յանձնաժողով է կազմված Զէվադ-փաշայի նախագահութեամբ Կրետէ կղզու վրա բէֆորմներ մտցնելու հարցը մշակելու համար։

—Վիէննայից լրագիրներին հեռագրում են, որ Շվարցէնայում եղած զօրախաղերին յայտնվեց, որ անձուխ վառօդը անձրևային եղանակին կորցնում է իր հիմնական յատկութիւնը—այն է անծուխութիւնը։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Մուխտար-փաշան Կայիրէից կանչված է Կ. Պոլիս։ Նախկին չէյխին վճռված է Մեդինա աքսորել։ Լուրեր են պտտում, որ իբր թէ սուլթանին հաղորդել էին, որ Քեամիլ-փաշան գլուխ է կանգնած մի դաւադրութեան, որի նպատակն է Թիւրքաց դահը բարձրացնել Մուրադ V-ին։ Ասում են, որ իբր թէ Քեամիլ-փաշան ոչ միայն արձակված էր մեծ-վիզիրի պաշտօնից, այլ և կալանաւորված էր։ Այդ բոլոր լուրերը, ի հարկէ, ոչ մի կերպ չէ կարելի ստուգել։ Վիէննայի «Neues Tageblatt» լրագրի խօսքերով, դաւադրութեան գոյութեան մասին կասկած յայտնվեց հետևեալ հանգամանքի պատճառով։ Կիրակի, օգոստոսի 18-ին (30-ին) մեծ անձրև եկաւ Թիւրքաց մայրաքաղաքում, որը մի քանի տեղերում շատ վնաս հասցրեց։ Ի միջի այլոց անձրևը քանդեց այն հողը, որի վրա դրված էին գազային խողովակները, որի պատճառով գազային լուսաւորութիւնը յանկարծ հանգաւ սուլթանի պալատում և ամբողջ պալատը խաւարի մէջ ընկղմվեց։ Սուլթանն իսկոյն չար մտադրութիւն կասկածեց այդ դէպքի մէջ և աւելի ևս սաստկացաւ կասկածը նրա մէջ, երբ հեռեւեալ օրը, իր դահը բարձրանալու տարեդարձը տօնելու ժամանակ, տուաքվեցան հրախաղութեան համար պատրաստված մի քանի փամփուշտներ։ Համոզվելով որ իր կեանքի դէմ դաւադրութիւն կար, սուլթանն անյապաղ արձակեց թնդանօթաձիգների գլխաւորին, որի պարտաւորութիւնն էր հոգ տանել գազային լուսաւորութեան մասին պալատում, և հրամայեց բանտարկել երեք հայերին և չորս մահմէտականներին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 6 սեպտեմբերի։ Մարկիզ Սոլսբրի, իսկոյն իր Լօնդոն վերադառնուց յետոյ, կաչխատէ մի քանի ընտրողների առաջարկութեամբ՝ կօնֆէրէնցիա հրաւիրել Դարդանէլի միջով նաւերի անցնելու վերաբերեալ սահմանափակումները վերացնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 սեպտեմբերի։ Կարգադրութիւն է եղած ոսկու գրաւականով 25 միլիոն ռուբլու թղթադրամի նոր հրատարակութեան մասին։—Շնորհված են բարձրագոյն հրովարտակների հետ միասին՝ Բերլինի դեսպան կոմս Շուվալովին ս. Վլադիմիրի առաջին աստիճանի շքանշանը և ասիական բաժնի դիրեկտոր Կապնիստին՝ առաջին աստիճանի ս. Աննայի շքանշանը։—Որոշված է երկաթուղային տարիֆները պակասեցնել յարդի, խոտի, դիրտի, մրուրի, սերմի և ճակնդեղային քամուածքների համար, որոնք անպտղաբերութիւնից վնասված տեղերն են ուղարկվում անասուններին կերակրելու համար. պակասեցրած է նոյնպէս եղջիւրաւոր անասուններին տեղափոխելու տարիֆը, որոնց կերակրելու համար՝ այդպիսի նահանգներից ուղարկվում են չը վնասված նահանգները։ Այդ վճիռը կը գործադրվի սեպտեմբերի 7-ից։

ՎԻՏԲԻ, 6 սեպտեմբերի։ Երէկ, նախագահ Կարնօի և ահագին բազմութեան ներկայութեամբ զօրախաղերից յետոյ փառաւոր զօրահանդէս տեղի ունեցաւ։ Գեներալներին տրված ճաշին նախագահը ջերմապէս շնորհակալութիւն յայտնեց զօրքին, որն արդարացրեց երկրի սպասելիքները։ Զօրահանդէսից յետոյ ցոյց եղաւ ի պատիւ Ռուսաստանի։

ՇԱՆԽԱՅ, 6 սեպտեմբերի։ Չինաստանի ներքին դրութիւնը շատ յուզիչ է։ Եանցէկեանդի հոլտում ապստամբութիւն է սպասվում։ Շանխայում և Շինկիանգում բռնել են բազմաթիւ զէնքեր և դինամիտ, որոնք ուղարկվում էին գաղտնի ընկերութիւնների համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 սեպտեմբերի։ Ս. սինօդը, ի լրումն օգոստոսի 21-ի կարգադրութեան, ցուցմունքներ է անում նուիրատուութիւնները հաւաքելու և բաժանելու վերաբերմամբ. ի միջի այլոց ասված է. թեմական մասնաժողովներին մասնակցելու համար հրաւիրվում են այնպիսի անձինք, որոնք ընդունակ են օգուտ տալ մասնաժողովին նրա գործունէութեան մէջ։ Նպաստներ բաժանելու համար պէտք է ղեկավարվել գլխաւորապէս տեղական հոգևորականութեան տուած տեղեկութիւններով. պէտք է նպաստներ բաժանելու պարտաւորութիւնը դնել յուսալի մարդկանց վրա հոգևորականութեան շրջանից. նպաստներ պէտք է տալ, առանց կրօնի խտրութեան, առաւելապէս մեթոդիստների ձևով, իսկ դրամական նպաստներ պէտք է տալ, երբ այլապէս անկարելի կը լինի. նպաստներ տալու ժամանակ հոգատար ուշադրութիւն պէտք է դարձնել որբ երեխաների վրա։ Մասնաժողովները պէտք է սինօդին տեղեկութիւններ տան իրանց բոլոր կարգադրութիւնների և ստացվող նուիրատուութիւնների մասին։ Դրամական գումարները մասնաժողովները պէտք է անյապաղ ուղարկեն թեմերի մասնաժողովներին։ Սինօդը անհրաժեշտ դատեց անպտղաբերութիւնից վնասված թեմերում անյապաղ օգնութեան կարօտ հոգևորականութեանը միանուագ տալ 25,000 ր. և թոյլատրել թեմական սրբազաններին տեղական թեմական հոգաբարձութիւնների գումարներից

հոգևորականութեանը հնարաւորութեան չափ կարճաժամանակեայ փոխառութիւններ տալ հինգից ոչ բարձր տոկոսով։—Լրագիրները հաղորդում են, որ ալիւրաղացների համառուսական ժողովը կը հրաւիրվի դեկտեմբերի սկիզբներում։—Գինու և կենսական մթերքների կեղծման դէմ առանձին յանձնաժողովի նախագիծը կը քննվի պետական խորհրդի առաջիկայ նստաշրջանում և կը սկսի գործադրվել 1892 թ-ի երկրորդ կիսին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի։ Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Գէօրգիեվնա, յղի լինելով, սեպտեմբերի 6-ի նախընթաց գիշերը յանկարծ հիւանդացաւ։ Հարկաւոր դատվեց օպէրացիա անել. արու զաւակ ծնելուց յետոյ, հիւանդութիւնը թուլացաւ, բայց յետոյ կրկին սաստկացաւ և օգոստափառ հիւանդը ուշաթափ դրութեան մէջ ընկաւ։ Բիւլլետէնի հիման վրա, սեպտեմբերի 7-ից, Մեծ Իշխանուհին նախկին վտանգաւոր դրութեան մէջ է գտնվում և ուշազուրկ է։ Հիւանդագին ցնցումները ժամանակ առ ժամանակ կրկնվում են։ Բարձրը նորածինը բաւարար դրութեան մէջ է գտնվում։—Բարձրագոյն արդելված է Արխանգէլսկ նահանգից արտասահման տանել հաճար, հաճարի ալիւր և ամեն տեսակ թեփեր։ Այդ միջոցը գործադրելու է «օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակվելու օրից։—Ցունական Գէորգ արքայորդուն չնորհված է ոսկէ մեդալ «կեանքը աղատելու համար», վլադիմիրեան ժապաւէնի վրա։—Ի նկատի ունենալով անասունների չումայի վերաբերմամբ տարածված անճիշդ տեղեկութիւնները, անասնաբուժական վարչութիւնը յայտարարում է, որ չուման տարածվել էր միայն Սամարայի, Ուֆիմի և Օրէնբուրգի նահանգներում և որ 1148 գլուխ տաւար կոտորելուց յետոյ, աջողվեց կատարելապէս արմատախիլ անել տարափոխիկ հիւանդութիւնը։—Այսօրվան բիւլլետէնը հաղորդում է, որ Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Գէօրգիեվնայի դրութեան մէջ մի փոքր բարւոքումն է նկատվում, թէպէտ և ուշքի դեռ չէ եկել։ Բարձր նորածին Մեծ Իշխանին Դիմիտրի անունն են տուել։—Այսօր երեկոյեան 9 ժամին կայսերական գնացքը յունաց թագաւորով գնաց Բրէստ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 6-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	— կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	46 »	20 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	— »
Ոսկի — — արժէ . .	7 »	53 »
Մաքսային կուպոններ — . .	150 »	— »
Արծաթ — — — . .	1 »	14 »
Բորսային դիսկոնտներ — . .	5 »	6 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	103 »	— »
— — — — 2-րդ —	102 »	75 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	75 »
6% ոսկեայ ընտա	155 »	75 »
4% ոսկեայ փոխառութիւն	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — — 2-րդ —	101 »	50 »
— — — — 3-րդ —	103 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	237 »	50 »
— — երկրորդ —	221 »	50 »
Պետական. երկաթուղային ընտա .	103 »	75 »
5½% ընտա	— »	— »
4% ներքին փոխառութիւն	96 »	— »
4% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101 »	37 »
Ազն. կալ. բանկի խաղարկութան դրաւ. թղթ. — — ,	210 »	50 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105 »	75 »
4½% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	145 »	75 »
— — — թղթադ.	101 »	25 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101 »	37 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	25 »
Օդէսայի — — .	100 »	75 »
Թիֆլիսի — —	— »	— »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »
— — Քութայիսի — — .	— »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով. 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%։ Վաճառվում է եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մոտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կոպ. Գրավաճառներին զիջում կը լինի։

Ներկայ թուականի սեպտեմբերի 1-ից սկսեալ, մի ուսեալ հայ ընտանիք Թիֆլիսում ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻԿ աշակերտներ, որոնք կարող են բացի ռուսերէնից նաև գերմաներէն և ֆրանսերէն լեզուների գործնական վարժութիւններ ունենալ։ Յանձնակատարները թող դիմեն հետևեալ հասցէով. Набережная ул. домъ № 11.

12—12 (Ե. շ.)

Ա. ՌԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ՌԱԼԼԷ և ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻ

ՄԱԽՄՈՒՐԻ ՊՈՒԴՐ

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՍԱՊՕՆ

ՁՈՒԻ ՍԱՊՕՆ

ՄԱՔՐՎԱԾ ԾԱՂԿԱՀԻՒԹ ՕԴԿՕԼՕՆ.

Ծախվում է ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքներում։ ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏ ուղարկվում է ձրիապէս։

5—5 (10—25)

ՀԱՐԿԱՒՈՐ Է Ե. կարգի մի ուսուցիչ, ՀԱԴՐՈՒԹԻ միդասեան երկսեռ հայոց ուսումնարանների համար, հետևեալ առարկաներից. ՌՈՒՍԱՑ լեզուից, ԹԻՒԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ և ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ։ Ընդամենը 20 դաս։ Ռոճիկ 400 ռուբլի։ Կը ստանայ ՊԼ Նակարան և ծառայ։

Յանկացողը թող հեռագրէ այս հասցէով. ШУША, Тевосу Тероганесянцу.

2—3

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ „ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրօնում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա։ Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կոպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում։

Կերակուրները թարմ և համով։

НОВЫЕ НОМЕРА „ДАНІЯ“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

9—36

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

18—25 (Ե. Շ.)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 20/2 հոկտեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ GUADIANA (ԳՒԻԱԴԻԱՆԱ) շոգենաւը, նաւապետ LAMANON (ԼԱՄԱՆՕՆ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լոնդոն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍՏ։

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 11/23 սեպտեմբերի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԷ
— 25 սեպտ. (7 հոկտեմբերի)	—	ԱՐՄԵՆԻԱ	— ՏԻԲԱԼ
— 9/21 հոկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ
— 23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)		ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱԲՐԻԷ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։

Ցօմանկների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, նախկին զեներալ Տէր-Աստուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, Կոլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Բրնօին։

1—12 (Ե. շ.)

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որը Ներսիսեան դպրանոց աւարտած և տասներկու տարի դասատու է եղել հայոց ծխական և արքունի դպրոցներում և ունի իրաւունք 4-րդ դասակարգի, ցանկանում է դասեր ունենալ հայոց ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։

Հասցէն. ТАГАНРОГЪ, Якову Теръ-Мартиросову.

ՀԵՌԱԳՐԻ համար ТЕРМАРТИРОСОВУ.

2—3

Մի երիտասարդ ՀԱՅ ԿԻՆ, որը շատ լաւ գիտէ հայերէն, կը կամենար մտնել մի հայ ընտանիք, որպէս ՏՆՏԵՍՈՒՀԻ կամ ԲՕՆՆԱ։

Հարցնել հասցէի մասին „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

2—5

ՎԱՅԵԼՈՒՉ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Նոր տանը. Կուկիա, անկիւն Ելիսավետեան և Կիրօչնի փողոցների. եօթ և վեց սենեակներով. ունեն առանձին շքեղ մուտքեր, ջրանցքներ, բաղանիքներ, վատերկլօզետներ և բոլոր յարմարութիւններ։

3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Сентября 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз